



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29

Հեռ. (010) 778-122

թիվ 96/7-1299

«24» 10----- 2025 թ.

**Հայ-Ռուսական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության թիվ 063
մասնագիտական խորհրդի նախագահ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ս. Ավերիսյանին**

Հարգելի՛ պարոն Ավերիսյան

Ուղարկվում է Ռաֆիկ Գազիկի Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» թեմայով իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը:

Կից՝ կարծիքը՝ «5» թերթից (2 օրինակով) և ատենախոսությունը:

Հարգանքով՝

Ռեկտոր

Մ. Մուրադյան

Կատարող՝ Ա. Սաֆարյան (093577589)

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի տնօրենի պաշտոնատեղի
23
ՀԱՐՄԻՔ



**Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝
Ռաֆիկ Գազիկի Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը
նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական
վերլուծություն)» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և
պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Գևորգյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Լ. Ա. Ղազանչյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Յու. Թադևոսյանի և Ա. Գ. Սաֆարյանի, քննարկեց Ռաֆիկ Գազիկի Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ատենախոսությունը նվիրված է արդի իրավագիտության և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի օրակարգային հիմնախնդիրներից մեկի գիտական հետազոտությանը: Դատական վերահսկողության ինստիտուտը էական նշանակություն ունի իրավակիրառ պրակտիկայի լավարկման, ինչպես նաև օրենսդրության բարելավմանն ուղղված գործընթացներում: Միաժամանակ, կարևոր է դատական վերահսկողության օբյեկտի պարզումը՝ տարանջատելով նորմատիվ

իրավական ակտի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողությունը իրավական նորմի դատական վերահսկողության օբյեկտ հանդիսանալուց: Նշված խնդրի ուսումնասիրումը պատմական խոր արմատներ ունի. սկսած ցարական Ռուսաստանի օրենսդրությունից, անգլիական իրավունքի, «գերմանական» մոդելի, խորհրդային դադարից հետո նորմատիվ իրավական ակտերը դատարանում վիճարկելու քայլերից մինչև մերօրյա իրավակարգավորումների զարգացումը: Կարևորելով նշված և դրանցից բխող այլ խնդիրների ուսումնասիրությունը՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է տեսապատմական հետազոտությունների և վարչադատավարական իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունների համատեքստում իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և ոչ պետական մարմինների լոկալ իրավական ակտերը ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ ճանաչելու հիմնախնդիրների գիտական հետազոտություն՝ ուղենիշ ունենալով լոկալ իրավական ակտերում ամրագրված կանոնների և կորպորատիվ նորմերի սահմանազատումը, ինչպես նաև լոկալ իրավական ակտերն անհատական ու նորմատիվ իրավական ակտերից տարանջատելու տեսական և գործնական խնդիրների լուծումը:

Դոկտորական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասնութ պարագրաֆ պարունակող հինգ գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, ատենախոսության տեսական հիմքերը, հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և հատուկ մեթոդներն ու եղանակները, ինչպես նաև՝ գիտական նորույթը, հետազոտության նպատակը, խնդիրները, տեսական, գործնական նշանակությունը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Դատական վերահսկողության օբյեկտը և առարկան» վերտառությամբ գլխում հեղինակը վերլուծել է դատական վերահսկողություն և նորմավերահսկողություն տերմինների հարաբերակցությունը դատական պրակտիկայում, տարանջատել վերահսկողության «օբյեկտ» և «առարկա» եզրույթները, անդրադարձել ուղղակի դատական վերահսկողության առարկայի, օբյեկտների տեսաիրավական հիմնախնդիրներին:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի պատմական զարգացումը» խորագիրը, լուսաբանված են նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության նախատիպերը Հին Աթենքում, անգլիական իրավունքում, Ռուսական Կայսրությունում, խորհրդային իրավունքում, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը Հայաստանի Հանրապետությունում: Քննարկվող գլխի շրջանակներում հեղինակն անդրադարձել է նաև իրավաբան գիտնականների և բարձր դատարանների դիրքորոշումներին:

Ատենախոսության երրորդ՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողությունը դատական իշխանության համակարգում» վերտառությամբ գլխում հետազոտության առարկա են հանդիսացել «արդարադատություն» հասկացության ինքնավար մեկնաբանությունը սահմանադրական տեքստի և ճյուղային օրենսդրությունների համատեքստում: Հաջորդիվ, հեղինակը անդրադարձել է ուղղակի և անուղղակի դատական վերահսկողության, ուղղակի դատական վերահսկողության և նորմավերահսկողության, դատական վերահսկողության և դատական հսկողության հիմնախնդիրներին Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքի չորրորդ գլխում, որը կրում է «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի լոկալ (ներքին) իրավական ակտերի նկատմամբ» խորագիրը, լուսաբանված են նորմատիվ բնույթի ներքին իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ ուղղակի վերահսկողության առանձնահատկությունները, վիճարկման հնարավորությունները: Քննարկվող գլխի համատեքստում հեղինակն անդրադարձել է լոկալ (ներքին) իրավական նորմերին սոցիալական նորմերի համակարգում, ներկայացրել լոկալ և կորպորատիվ ակտերի (նորմերի) հարաբերակցությունը, պետական ճանաչման հարցերը, իրավաընկալման տիպերը, սանկցավորման եղանակները, անհատական և լոկալ իրավական ակտերի միախառնումը, անհատական և նորմատիվ իրավական ակտերի օրենսդրական բնորոշումները և առանձնահատկությունները, ինչպես նաև ինքնատիպ նորմատիվ իրավական ակտերը, անհատական և նորմատիվ իրավական ակտերի հարաբերակցությունը, ընդհանուր և տարբերիչ հատկանիշները, Հայաստանի Հանրապետության օրենսդրի մոտեցումը, դոկտրինալ ու իրավահամեմատական տեսանկյունները:

Ատենախոսության հինգերորդ՝ «Նորմատիվ բնույթի իրավական ակտերի իրավաչափության ստուգման չափանիշները» վերտառությամբ գլխում հեղինակը քննարկել է օրինականության ստուգման սխեման ռուսական, գերմանական դոկտրինում, ենթաօրենսդրական ակտերի օրինականության ստուգման սխեման Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, անդրադարձել ենթաօրենսդրական ակտ ընդունելու իրավասության իրավաչափությանը:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը, որի շրջանակներում հեղինակը նշում է արդարադատության հասկացության ինքնավար նշանակության մասին՝ առանձնացնելով այն հիմնադրույթը, որ սահմանադրական տեքստում արդարադատություն ասելով հասկացվում է և՛ դատական վերահսկողությունը, և՛ վեճերի լուծման այլ ձևերը: Մեր կարծիքով, նպատակահարմար է առաջարկվող դրույթը դիտարկել՝ հաշվի առնելով Սահմանադրության հիմնարար բնույթը, որի կարգավորումները նախահիմք են համարվում բոլոր տեսակի իրավահարաբերությունների կարգավորման համար և ըստ էության, միայն

տեքստային ձևակերպմամբ չէին կարող ընդգրկուն արտացոլել առանձին եզրույթների, այդ թվում՝ «Դատական վերահսկողություն» հասկացության նշանակությունը: Ընդ որում, այս համատեքստում հարկ է անդրադառնալ ատենախոսության 3.2.2 ենթապարագրաֆում թվարկված ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված «արդարադատություն» եզրույթի գործածմամբ հոդվածների թվարկմանը և համալրել այն ՀՀ Սահմանադրության 167-րդ հոդվածով, որով սահմանվում է, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ պահովելով Սահմանադրության գերակայությունը:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթը, որի շրջանակներում հեղինակը ներկայացրել է նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության վերաբերյալ պատմական ակնարկ: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր և կարող էր ներառվել «Եզրակացություններ» բաժնում :

3. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, օգտագործված գրականության ցանկի «Դատական պրակտիկայի նյութեր» բաժնում բացակայում են ներկայացված որոշ ակտերի(289, 290, 291, 298, 299, 300, 304, 305, 309, 314, 315, 316, 317, 318) էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները: Բացի այդ «նորմատիվ իրավական ակտեր» բաժնում նշված չեն ներկայացված աղբյուրների ՀՀ պաշտոնական կամ գերատեսչական ակտերի տեղեկագրի հերթական և ընդհանուր համարները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեգրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:


Հետևություն. «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Ռաֆիկ Գագիկի Խանդանյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Ռաֆիկ Գագիկի Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» խորագրով դոկտորական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ

կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2025 թ. հոկտեմբերի 23-ի նիստում, արձանագրություն թիվ 5 :


Ամբիոնի պետ




Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր



Ա. Է. Սուքիասյան



**Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝
Ռաֆիկ Գազիկի Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը
նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական
վերլուծություն)» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և
պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Գևորգյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Լ. Ա. Ղազանչյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Յու. Թադևոսյանի և Ա. Գ. Սաֆարյանի, քննարկեց Ռաֆիկ Գազիկի Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ատենախոսությունը նվիրված է արդի իրավագիտության և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի օրակարգային հիմնախնդիրներից մեկի գիտական հետազոտությանը: Դատական վերահսկողության ինստիտուտը էական նշանակություն ունի իրավակիրառ պրակտիկայի լավարկման, ինչպես նաև օրենսդրության բարելավմանն ուղղված գործընթացներում: Միաժամանակ, կարևոր է դատական վերահսկողության օբյեկտի պարզումը՝ տարանջատելով նորմատիվ

իրավական ակտի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողությունը իրավական նորմի դատական վերահսկողության օբյեկտ հանդիսանալուց: Նշված խնդրի ուսումնասիրումը պատմական խոր արմատներ ունի. սկսած ցարական Ռուսաստանի օրենսդրությունից, անգլիական իրավունքի, «գերմանական» մոդելի, խորհրդային դադարից հետո նորմատիվ իրավական ակտերը դատարանում վիճարկելու քայլերից մինչև մերօրյա իրավակարգավորումների զարգացումը: Կարևորելով նշված և դրանցից բխող այլ խնդիրների ուսումնասիրությունը՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է տեսապատմական հետազոտությունների և վարչադատավարական իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունների համատեքստում իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և ոչ պետական մարմինների լոկալ իրավական ակտերը ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ ճանաչելու հիմնախնդիրների գիտական հետազոտություն՝ ուղենիշ ունենալով լոկալ իրավական ակտերում ամրագրված կանոնների և կորպորատիվ նորմերի սահմանազատումը, ինչպես նաև լոկալ իրավական ակտերն անհատական ու նորմատիվ իրավական ակտերից տարանջատելու տեսական և գործնական խնդիրների լուծումը:

Դոկտորական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասնութ պարագրաֆ պարունակող հինգ գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, ատենախոսության տեսական հիմքերը, հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և հատուկ մեթոդներն ու եղանակները, ինչպես նաև՝ գիտական նորույթը, հետազոտության նպատակը, խնդիրները, տեսական, գործնական նշանակությունը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Դատական վերահսկողության օբյեկտը և առարկան» վերտառությամբ գլխում հեղինակը վերլուծել է դատական վերահսկողություն և նորմավերահսկողություն տերմինների հարաբերակցությունը դատական պրակտիկայում, տարանջատել վերահսկողության «օբյեկտ» և «առարկա» եզրույթները, անդրադարձել ուղղակի դատական վերահսկողության առարկայի, օբյեկտների տեսաիրավական հիմնախնդիրներին:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի պատմական զարգացումը» խորագիրը, լուսաբանված են նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության նախատիպերը Հին Աթենքում, անգլիական իրավունքում, Ռուսական Կայսրությունում, խորհրդային իրավունքում, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը Հայաստանի Հանրապետությունում: Քննարկվող գլխի շրջանակներում հեղինակն անդրադարձել է նաև իրավաբան գիտնականների և բարձր դատարանների դիրքորոշումներին:

Ատենախոսության երրորդ՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողությունը դատական իշխանության համակարգում» վերտառությամբ գլխում հետազոտության առարկա են հանդիսացել «արդարադատություն» հասկացության ինքնավար մեկնաբանությունը սահմանադրական տեքստի և ճյուղային օրենսդրությունների համատեքստում: Հաջորդիվ, հեղինակը անդրադարձել է ուղղակի և անուղղակի դատական վերահսկողության, ուղղակի դատական վերահսկողության և նորմավերահսկողության, դատական վերահսկողության և դատական հսկողության հիմնախնդիրներին Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքի չորրորդ գլխում, որը կրում է «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի լոկալ (ներքին) իրավական ակտերի նկատմամբ» խորագիրը, լուսաբանված են նորմատիվ բնույթի ներքին իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ ուղղակի վերահսկողության առանձնահատկությունները, վիճարկման հնարավորությունները: Քննարկվող գլխի համատեքստում հեղինակն անդրադարձել է լոկալ (ներքին) իրավական նորմերին սոցիալական նորմերի համակարգում, ներկայացրել լոկալ և կորպորատիվ ակտերի (նորմերի) հարաբերակցությունը, պետական ճանաչման հարցերը, իրավաընկալման տիպերը, սանկցավորման եղանակները, անհատական և լոկալ իրավական ակտերի միախառնումը, անհատական և նորմատիվ իրավական ակտերի օրենսդրական բնորոշումները և առանձնահատկությունները, ինչպես նաև ինքնատիպ նորմատիվ իրավական ակտերը, անհատական և նորմատիվ իրավական ակտերի հարաբերակցությունը, ընդհանուր և տարբերիչ հատկանիշները, Հայաստանի Հանրապետության օրենսդրի մոտեցումը, դոկտրինալ ու իրավահամեմատական տեսանկյունները:

Ատենախոսության հինգերորդ՝ «Նորմատիվ բնույթի իրավական ակտերի իրավաչափության ստուգման չափանիշները» վերտառությամբ գլխում հեղինակը քննարկել է օրինականության ստուգման սխեման ռուսական, գերմանական դոկտրինում, ենթաօրենսդրական ակտերի օրինականության ստուգման սխեման Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, անդրադարձել ենթաօրենսդրական ակտ ընդունելու իրավասության իրավաչափությանը:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը, որի շրջանակներում հեղինակը նշում է արդարադատության հասկացության ինքնավար նշանակության մասին՝ առանձնացնելով այն հիմնադրույթը, որ սահմանադրական տեքստում արդարադատություն ասելով հասկացվում է և՛ դատական վերահսկողությունը, և՛ վճճերի լուծման այլ ձևերը: Մեր կարծիքով, նպատակահարմար է առաջարկվող դրույթը դիտարկել՝ հաշվի առնելով Սահմանադրության հիմնարար բնույթը, որի կարգավորումները նախահիմք են համարվում բոլոր տեսակի իրավահարաբերությունների կարգավորման համար և ըստ էության, միայն

տեքստային ձևակերպմամբ չէին կարող ընդգրկուն արտացոլել առանձին եզրույթների, այդ թվում՝ «դատական վերահսկողություն» հասկացության նշանակությունը: Ընդ որում, այս համատեքստում հարկ է անդրադառնալ ատենախոսության 3.2.2 ենթապարագրաֆում թվարկված ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված «արդարադատություն» եզրույթի գործածմամբ հոդվածների թվարկմանը և համալրել այն ՀՀ Սահմանադրության 167-րդ հոդվածով, որով սահմանվում է, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ պահովելով Սահմանադրության գերակայությունը:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթը, որի շրջանակներում հեղինակը ներկայացրել է նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության վերաբերյալ պատմական ակնարկ: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր և կարող էր ներառվել «Եզրակացություններ» բաժնում:

3. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, օգտագործված գրականության ցանկի «Դատական պրակտիկայի նյութեր» բաժնում բացակայում են ներկայացված որոշ ակտերի(289, 290, 291, 298, 299, 300, 304, 305, 309, 314, 315, 316, 317, 318) էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները: Բացի այդ «նորմատիվ իրավական ակտեր» բաժնում նշված չեն ներկայացված աղբյուրների ՀՀ պաշտոնական կամ գերատեսչական ակտերի տեղեկագրի հերթական և ընդհանուր համարները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» վերտա-
ռությամբ դոկտորական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստի-
ճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» նմանատիպ աշ-
խատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Ռաֆիկ Գագիկի Խանդանյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Ռաֆիկ Գագիկի Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» խորագրով դոկտորական ատենա-
խոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ

կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2025 թ. հոկտեմբերի 23-ի նիստում, արձանագրություն թիվ 5 :

Ամբիոնի պետ



Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր



Ա. Է. Սուքիասյան

